Հայտարարություն

«ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Մ.Մաշտոցի անվան թիվ 15 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար

1.Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը

2)ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2.Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է ՝

1)դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,

2)Հաայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,

3)հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4)տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5)ինքնակենսագրություն,

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրնակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Մ.Մաշտոցի անվան թիվ 15 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում **2021 թվականի նոյեմբերի 8 -ից մինչև նոյեմբերի 26 -ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 10.00 -ից մինչև ժամը 16.00 -ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2021 թվականի դեկտեմբերի 10-ին՝ ժամը 13.00-ին**, «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Մ. Մաշտոցի անվան թիվ 15 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում /ք.Վանաձոր , Աղայան 69/:

Տեղեկությունների համար դիմել 093359195 , Marineghazaryan.1964@mail.ru